ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2089-Ա « 27 » մայիսի 2025 թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի տոնական ձևավորման և միջոցառումների կազմակերպման աշխատանքները պատշաճ կատարելու համար՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը և 12-րդ կետի 2-րդ ենթակետը՝

1. Ձևավորել մասնագիտական խումբ՝ հետևյալ կազմով.

Սուրեն Գրիգորյան - Երևանի քաղաքապետի տեղակալ (խմբի ղեկավար)

Արմեն Առաքելյան - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետ

2. Սույն որոշման 1-ին կետով ձևավորված մասնագիտական խմբին՝ իրականացնել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատու ստորաբաժանման գործառույթները:

3. Մասնագիտական խմբին վերապահված փաստաթղթերը համարվում են ստորագրված, եթե առկա է մասնագիտական խմբի ղեկավարի և մասնագիտական խմբի անդամի ստորագրությունները:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել մասնագիտական խմբի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ